ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԴԱՊԱՏՃԱՌԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լ. Ն. ՔՈՒՐՔՉՅԱՆ
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
Ն. Ա. ԱԹԱՅԱՆ
«Աբովյանի թիվ 1 մտավոր հետամնացություն ունեցող
երեխաների հատուկ (օժանդակ) դպրոցի» հոգեբան

Հոդվածում ներկայացված է մասնագիտության ընտրության գործընթացում մանկատան սաների և ընտանիքում մեծացող նրանց հասակակիցների դրդապատճառների, մասնագիտական ուղղվածության և հետաքրքրությունների առանձնահատկությունների համեմատական վերլուծություն:

Դեռահասության և պատանեկության տարիքում երիտասարդների առջև ծառացող կարևորագույն և անհետաձգելի խնդիրը անձնային և մասնագիտական ինքնորոշումն է, ‹‹Ո՞վ լինել›› հարցի պատասխանը: Մասնագիտության ընտրության որոշումը երիտասարդները պետք է կատարեն գիտակցված և ինքնուրույն՝ ավելի շատ հենվելով ապագայի մասին իրենց պատկերացումների վրա: Այս ամենի հետ կապված՝ բոլոր երիտասարդների մոտ էլ կարող են առաջանալ բացասական հուզական վիճակներ՝ անորոշություն, կասկածներ, անհանգստություն, վախ և մի շարք դժվարություններ, որոնք ժամանակի ընթացքում հարթվում են՝ շնորհիվ իրենց ծնողների, բարեկամների, ընկերների աջակցության և սեփական ջանքերի: Բայց իրավիճակը միանգամայն այլ է մանկատան սաների պարագայում: Նրանց մասնագիտական կողմնորոշման ճանապարհին հայտնվում են բազմաթիվ խոչընդոտներ և բացասական գործոններ:

Խորհրդային մի շարք հայտնի հոգեբաններ (Ե. Ա. Կլիմով, Ի. Ս. Կոն, Ի. Մ. Կոնդակով, Ն. Ս. Պրյաժնիկով) առանձնացնում են գործոնների մի խումբ, որոնք բացասական ներգործություն են թողնում մասնագիտական ընդունակությունների ձևավորման վրա: Առաջին

գործոնը մայրական խնամքի, ծնողական հենարանի, նրանց կերպարի, խորհուրդների բացակայությունն է [1, էջ 13]: Երեխայի համար առաջին ընդօրինակման օբյեկտը համարվում է ծնողը, հետևաբար և նրանց շնորհիվ է ձևավորվում աշխատանքի, մասնագիտական գործունեության նկատմամբ առաջնային վերաբերմունքը:

Երկրորդ գործոնը հենց մանկատանը ապրելու փաստն է, ինչը ստեղծում է կենսական տարածության սահմանափակում և ներփակվածություն, որն էլ իր հերթին հանգեցնում է սոցիալական հարաբերությունների միօրինակության ու սահմանափակության [1, էջ 16]:

Մասնագիտական կողմնորոշման նորմալ ընթացքին խոչընդոտ է նաև «Ես-կերպարի մասին պատկերացումների անբավարար արտահայտվածությունը» [2, էջ 216]: Ինքնաճանաչման ցածր մակարդակի պատճառով նրանք շատ քիչ են տեղեկացված իրենց ընդունակությունների, կարողությունների, հնարավորությունների, իրենց ներուժի մասին: Ցածր, ոչ համարժեք ինքնագնահատականի, սեփական ուժերի հանդեպ անվստահության և ինքնաճանաչման ցածր մակարդակի պատճառով մանկատան սաները հաճախ ընտրում են ավելի «թեթև» մասնագիտությունները, որոնց յուրացումը մեծ ջանքերի և ուժերի գործադրում չի պահանջում:

Անվանի հոգեբաններ Ա. Մ. Պրիխոժանը և Ն. Ն. Տոլստիխը նշում են, որ մասնագիտական ինքնորոշման վրա բացասական է ազդում այն, որ մանկատան երեխաների մոտ վառ արտահայտված են առօրեական ցանկությունները, գործնականում արտահայտված չեն հեռանկարային դրդապատճառները [3, էջ 101]: Մանկատան երեխան չի տեսնում իր և իր ընտանիքի անցյալը, հետևաբար նրա համար դժվար է տեսնել իրեն ապագայում: Իր անցյալի մասին հստակ պատկերացումների բացակայությունը, անձնական պատմության կորուստը խոչընդոտում են ապագայի հեռանկարների կառուցմանը և հստակ, կոնկրետ պատկերացումների ձևավորմանը [4, էջ 234]:

Մասնագիտական կողմնորոշման գործընթացին խոչընդոտ է նաև մանկատան երեխաների թույլ արտահայտված իմացական պահանջմունքները, ինտելեկտուալ պասիվությունը, դպրոցական տարբեր առարկաների և ընդհանրապես ուսման նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրության ցածր մակարդակը: Ընտանիքում մեծացած երեխաների հետաքրքրությունների, հակումների, ունակությունների համակարգը,

դեռահասության տարիքից սկսած, դառնում է էական, իսկ մանկատան սաների համար՝ ավելի հեռակա [2, էջ 215-216], ‹‹սահմնափակ են նաև ընտրության դրդապատճառները, դրանք ավելի միակերպ ու աղքատիկ են›› [4, էջ 239]:

Վերոնշյալ դիտարկումների քանակական և որակական հարաբերակցության որոշման համար հոգեբանական հետազոտություններ ենք կատարել Վանաձորի և Գավառի մանկատների 30 սաների և Աբովյանի կրթահամալիրի 30 աշակերտների հետ: Կիրառվել է Ռ.Վ. Օվչարովայի ‹‹Մասնագիտության ընտրության դրդապատճառների ախտորոշման›› հարցարանը, Ե.Ա. Կլիմովի ‹‹Տարբերակիչ-ախտորոշիչ›› հարցարանը և Ա.Ե. Գոլոմշտոկի ‹‹Հետաքրքրությունների քարտը››:

Այսպես, ինչպես երևում է համեմատական գծապատկերից (տե՛ս գծապատկեր 1), ընտանիքում մեծացած պատանիների մեծ մասին (67%) մասնագիտության ընտրությանը դրդել են ներքին դրդապատճառները, որոնք առաջանում են հենց անձի պահանջմունքներից, դրա համար էլ այս դրդապատճառների առկայության դեպքում սուբյեկտն աշխատում է հաճույքով՝ առանց արտաքին ճնշումների: Այս պատանիների 37%-ին մասնագիտական կողմնորոշմանը դրդել են մասնավորապես ներքին անհատական նշանակալի դրդապատճառները, այսինքն՝ մասնագիտության, աշխատանքի միջոցով նրանք ցանկանում են անձնային բավարարվածություն, հաճույք ստանալ, դրսևորել իրենց ընդունակությունները, փորձել ուժերը և զարգանալ որպես անձ և մասնագետ:

Գծապատկեր 1.

Ռ. Վ. Օվչարովայի «Մասնագիտության ընտրության դրդապատճառների ախտորոշման» հարցարանով կատարված հետազոտության ամփոփ արդյունքները:



Իսկ մանկատան սաների հիմնական մասի (76%) մոտ գերակշռում են արտաքին դրդապատճառները, որոնք գտնվում են սուբյեկտի՝ աշխատող մարդու և աշխատանքի սահմաններից դուրս, այսինքն՝ կապված չեն աշխատանքային գործընթացի ներքին էության և ինքնազարգացման միտումների հետ:

43%-ը մասնագիտության ընտրության միջոցով ցանկանում են ձեռք բերել որոշակի նյութական բարիքներ, հեղինակություն, ազդեցիկություն, ներկայանալի տեսք, կոլեկտիվի, խմբի աջակցություն, ինչպես նաև՝ իրենց մասնագիտական ունակություններն աշխատանքից դուրս օգտագործելու հնարավորություն: Կարծում ենք, որ արտաքին դրական դրդապատճառների գերակայության հիմքում կարող է ընկած լինել այս երիտասարդների՝ հասարակական ճանաչման արժանանալու, հասարակության կողմից ընդունվելու մեծ պահանջմունքն ու ցանկությունը՝ այս կերպ փորձելով փոխհատուցել (կոմպենսացնել) իրենց ծնողների, հարազատների կողմից մերժվածությունը: 33%-ին բնորոշ են տարբեր տեսակի սահմանափակումները, ճնշումները, հետագա անհաջողություններից, քննադատություններից, ձախողումներից խուսափումը: Այսինքն՝ այս պատանիները հակված են ընտրելու այնպիսի մասնագիտական գործունեության բնագավառներ, որտեղ կկարողանան շրջանցել աշխատանքային գործունեության հետ կապված դժվարությունները, անհաջողությունները, կխուսափեն ճնշումներից, պատիժներից, մեղադրանքներից և խոչընդոտներից: Նման միտումը

կարելի է բացատրել ոչ համարժեք՝ ցածր ինքնագնահատականի և սեփական ուժերի նկատմամբ անվստահության առկայությամբ:

Ամփոփելով Ռ. Վ. Օվչարովայի հարցարանի արդյունքները՝ տեսնում ենք, որ մասնագիտական կողմնորոշման գործընթացում մանկատան սաների միայն 7%-ն է առաջնորդվել ներքին դրդապատճառներով. ներքին անհատական նշանակալի դրդապատճառների ստորադասումը և արտաքին դրդապատճառների գերակայությունը վկայում են այն մասին, որ մասնագիտական կողմնորոշումը հիմնված չէ անձի իմացական պահանջմունքների, մասնագիտական գործունեության բնագավառով խոր հետաքրքրվածության, դրանում սեփական ընդունակությունները, կարողությունները դրսևորելու և զարգացնելու ցանկությունների վրա:

Հաշվի առնելով նաև անձնական հետաքրքրությունների նշանակալիությունը և կարևորությունը մասնագիտական կողմնորոշման գործընթացում՝ մեր առջև նպատակ դրեցինք բացահայտել մանկատան սաների նախընտրելիք մասնագիտական գործունեության բնագավառի և այդ բնագավառի նկատմամբ դրսևորվող հետաքրքրությունների միջև առկա հարաբերակցությունը, ինչպես նաև դրանց հետ համապատասխանության մակարդակը:

Աղյուսակ 1.

Մասնագիտական ուղղվածության ախտորոշման հարցարանի և հետաքրքրությունների քարտի մեթոդիկայով ստացված արդյունքները Գավառի և Վանաձորի մանկատան սաների հետ:

Մասնագիտության տիպերն ըստ Ե.Ա.Կլիմովի	Մասնագիտության կոնկրետ տիպը նախընտրած հետազոտվողների քանակը	Նախընտրելիք մասնագիտական գործունեության բնագավառի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերած հետազոտվողների քանակն ըստ հետաքրքրությունների քարտի վերլուծության
Մարդ - բնություն	5	2
Մարդ - տեխնիկա	8	3
Մարդ – մարդ	9	5
Մարդ – նշանային համակարգ	4	0

Մարդ –գեղարվեստական կերպար	4	1
		Ընդհանուր՝ 11 հոգի – 37%

Աղյուսակ 2.

Մասնագիտական ուղղվածության ախտորոշման հարցարանի և հետաքրքրությունների քարտի մեթոդիկայով ստացված արդյունքներն ընտանիքում ապրող երիտասարդների մոտ:

Մասնագիտության տիպերն ըստ Ե.Ա.Կլիմովի	Մասնագիտության կոնկրետ տիպը նախընտրած հետազոտվողների քանակը	Նախընտրելիք մասնագիտական գործունեության բնագավառի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերած հետազոտվողների քանակն ըստ հետաքրքրությունների քարտի վերլուծության
Մարդ - բնություն	4	4
Մարդ - տեխնիկա	3	1
Մարդ – մարդ	9	6
Մարդ – նշանային համակարգ	4	1
Մարդ – գեղարվեստական կերպար	10	8
		Ընդհանուր՝ 20 հոգի – 67%

Այսպիսով, ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, մանկատան սաների 63%-ի մոտ նկատվում է անհամապատասխանություն իրենց հետաքրքրությունների և նախընտրելիք մասնագիտական գործունեության բնագավառների միջև: Մեր կարծիքով՝ նման նախընտրությունները կարող են պայմանավորված լինել հետևյալ գործոններով:

1.Այս պահին հրատապ կարևորություն, արդիական նշանակություն ձեռք բերած չբավարարված պահանջմունքների ակտիվացմամբ և արտաքին դրդապատճառների դոմինանտությամբ (ինչն արդեն բացահայտվել է Ռ.Վ. Օվչարովայի ‹‹Դրդապատճառային ոլորտի ուսումնասիրության» մեթոդիկայի միջոցով):

2.Մանկատների սոցիալական և ֆինանսական սահմանափակ հնարավորություններով, ինչպես նաև այդ բնակավայրերում գործող քոլեջների, տեխնիկումների և մասնագիտական ուսումնական մյուս հաստատությունների բաժինների, մասնագիտացումների սահմանափակությամբ: Այս գործոնով պայմանավորված՝ նրանք ընտրում են այնպիսի մասնագիտություններ, որոնց յուրացումը հնարավոր է տվյալ բնակավայրում:

3.Այս երիտասարդների մոտ առկա թերարժեքության արտահայտված բարդույթով: նրանք հրաժարվում են իրենց հետաքրքրող մասնագիտություններից, քանի որ չեն հավատում իրենց ուժերին, կարողություններին, ընդունակություններին՝ ընտրելով այնպիսի մասնագիտական գործունեություն, որը հեշտությամբ է յուրացվում, առանց երկարատև ուսուցման և մեծ ջանքերի:

Այսպիսով, վերը նշված հետազոտության արդյունքների վերլուծության ընդհանրացումը ցույց տվեց, որ մանկատան սաների մասնագիտական կողմնորոշումները պայմանավորված են առավելապես արտաքին դրդապատճառների գերակայությամբ և ոչ իրենց հետաքրքրություններին համապատասխանող մասնագիտությունների ընտրությամբ:

Բանալի բառեր՝ *մասնագիտական կոմնորոշում, մասնագիտական ուղղվածություն, դրդապատճառ, ընդունակություն:*

Օգտագործված գրականություն

1. Байбородова Л. В., Серебренников Л. Н., Чернявская А. П., Профориентация и самоопределение детей-сирот: учеб-методическое пособие, Изд-во РГУ им И. Канта,2010, 240с.
2. Дубровина И.В., Психологическое развитие воспитанников детского дома, М. ,1990,264с.
3. Прихожан А. М., Толстых Н. Н. , Дети без семьи: (Детский дом: заботы и тревоги общества) ,М.: Педагогика, 1990,160 с
4. Прихожан А. М., Толстых Н. Н. , Психология сиротства, Питер, 2005,400с.

THE PECULIARITIES OF THE SPHERE OF INTERESTS AND MOTIVATIONS IN ORPHANAGE CHILDREN' S PROFESSIONAL ORIENTATION PROCESS

L. N. KURKCHYAN
PhD in Pedagogical Sciences, Associate Professor
GSU Lecturer
N. A. ATAYAN
Psychologist of Abovyan Special (subsidiary)
N 1 School for Mentally Retarded Children

The issues of professional self-determination have been extensively studied in modern psychological science (E. A. Klimov, Yu. P. Povarenkov, N. S. Pryazhnikov and E.Yu. Pryazhnikova, V.F. Safin and others).

Traditionally, issues of professional orientation have been developed with reference to adolescence, the nature of professional self-determination and its structure have been studied, the main components and factors have been identified. However, do these factors remain unchanged in condition of education outside the family? An analysis of a comparative experiment is submitted, in which motives and interests of ordinary family and orphanage children's professional orientation are revealed.

ОСОБЕННОСТИ СФЕР ИНТЕРЕСОВ И МОТИВАЦИЙ В ПРОЦЕССЕ ПРОФОРИЕНТАЦИИ ВОСПИТАННИКОВ ДЕТСКОГО ДОМА

Л. Н. КУРКЧЯН
Кандидат педагогических наук, доцент,
Преподаватель ГГУ
Н. А. АТАЯН
Психолог Абовянской специальной (вспомогательной) школы № 1 для умственно отсталых детей

Вопросы профессионального самоопределения широко изучены в современной психологической науке (Е.А. Климов, Ю.П. Поваренков, Н.С. Пряжников и Е.Ю. Пряжникова, В.Ф. Сафин и другие).

Традиционно вопросы профессиональной ориентации разрабатывались применительно к подростковому возрасту, изучена природа профессионального самоопределения, его структура, обозначены основные компоненты и факторы. Однако остаются ли эти факторы неизменными в условиях воспитания вне семьи? В статье нами представлен анализ сравнительного эксперимента, в котором выявлены мотивы и интересы в профориентации детей обычных семей и воспитанников детских домов.